ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ՝ ԼԱՎԵՐԻՑ

Բարևնե'ր բոլորին: Այսօր ձեզ ներկայացնելու եմ տարվա լավագույն տասը տեսական ամբիոնները և լավագույն տասնհինգ դասախոսներին: Տվյալները ստացվել են ցածր կուրսերում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքում, որն իրականացրեցինք ես և Նարինե Ղազարյանը: Առաջին, երկրորդ, երորրդ կուրսերից մասնակցել են 12-ական խումբ: Դե լավ, շտապում եմ Ձեզ ներկայացնել արդյունքները:

Լավագույն տասնյակը բացում է Հյուսվածաբանության ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Ա.Վ.Ազնաուրյան): Համալսարանի 15 լավագույն դասախոսների ցուցակում այս ամբիոնը ունի մեկ ներկայացուցիչ: Այդ մարդը սիրված դասախոս Սոնա Ռ.Մելքոնյանն է: Նա լավագույն 15 դասախոսների ցուցակում զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը:

Լավագույն տասնյակում 9-րդ հորիզոնականը զբաղեցնում է Մարդու Ֆիզիոլոգիայի ամբիոնը (ամբիոնի վարիչ՝Դ.Ն.Խուդավերդյան): Այս ամբիոնը լավագույն 15 դասախոսների ցուցակում ներկայացուցիչ չունի:

8-րդ հորիզոնականը զբաղեցրել է Թերապևտիկ Ստոմատոլոգիայի ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Ա.Ա.Հարությունյան): Այս ամբիոնը, նույնպես, լավագույն տասնհինգյակում ներկայացուցիչ չունի:

7-րդ հորզոնականում է Ֆարմակալոգիայի ամբիոնը: Ամբիոնի վարիչ Ռ.Ս.Բեկյանը ուսանողության մեծամասնության ձայներով լավագույն տասնհինգյակում զբաղեցնում է հենց 7-րդ հորիզոնականը:

6-րդ հորիզոնականում է Ֆիզիկական դաստիարակության ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Ա.Մովսիսյան): Այս ամբիոնից Աշոտ Խ.Հակոբյանը լավագույն տասնհնգյակում զբաղեցնում է 15-րդ հորիզոնականը:

Լավագույն հնգյակը բացում է Հասարակական գիտությունների ամբիոնը: Ամբիոնի վարիչ տիկին Սուսաննա Դավթյանը լավագույն տասնհնգյակում զբաղեցնում է 6-րդ հորիզոնականը:

4-րդ հորիզոնականում է Հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Հ. Վ. Սուքիասյան): Լավագույն տասնհնգյակում, ինչքան էլ որ զարմանալի է, այս ամբիոնի դասախոսներին նույնպես չենք հանդիպի:

3-րդ պատվավոր հորիզոնականում է Բժշկական կենսաբանության ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Ս.Հ.Սիսակյան): Այս ամբիոնը համալսարանի15 լավագույն դասախոսների ցուցակում ունի միանգամից 3 ներկայացուցիչ: Ըստ զբաղեցրած հորիզոնականների 9-րդ հորիզոնական՝ Ալլա Տ. Թուսուզյան, 11-րդ հորիզոնական՝ Սուսաննա Բ.Բաբայան, 13-րդ հորիզոնական ՝ Ն. Ֆ. Կրասնիկով:

Արծաթե մեդալակիր է դառնում Մարդու նորմալ անատոմիայի ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Գ. Պ. Քյալյան): Լավագույն տասնհինգ դասախոսների ցուցակում առաջին պատվավոր հորիզոնականն է զբաղեցնում այս ամբիոնի դասախոս՝ Կարինե Մ. Բարոյանը, 2-րդ հորիզոնականում է սիրված դասախոս Ջուլետա Ռ. Խաչատրյանը, 5-րդ հորիզոնականում է՝ Աննա Ջ.Հարությունյանը:

ԵՊԲՀ-ի տեսական ամբիոնների այս շքերթը առաջնորդում է Օտար լեզուների ամբիոնը (ամբիոնի վարիչ՝ Վ. Մ. Բալաբանյան): Այս ամբիոնի դասախոսները լավագույն 15 դասախոսերի ցուցակում հինգը հորիզոնականներ. 3-րդ հորիզոնական՝ Անահիտ Ֆ.Մարտիրոսյան, 8-րդ հորիզոնական Վ. Մ. Բալաբանյան, 10-րդ հորիզոնական՝ Նառա Ս. Հարությունյան, 14-րդ հորիզոնական՝ պրն. Տիրացյան:

Լավագույն դասախոսների ցուցակում 12-րդ հորիզոնականը զբաղեցնում է Բիոքիմիայի ամբիոնի դասախոս `Մարգարիտա Ս.Մացոյանը:

«Medicus» ամսագրի խմբագրակազմը շնորհավորում է բոլոր այն դասախոսներին, ովքեր գտնվում էին այս ցուցակներում: Երջանիկ է այն դասախոսը, ով սիրված է իր ուսանողների կողմից: Իսկ, թե ինչ չափանիշներով են գնահատել մեր դասախոսներին հարցմանը մասնակցած ուսանողները, հստակ կարող են իմանալ միայն իրենք, իսկ ես իմ կողմից կարող եմ ավելացնել. ուսանողը սիրում է այն դասախոսին, ով սիրում է ուսանողին:

Հարգելի դասախոսներ, միշտ հիշեք, ուսանողները ձեզ հետևում են . . . .

Մնացականյան Վարդան

Ինչ են հուշում թվերը

Ահա արդեն Medicus-ի ծննդյան օրն է, և եկել է վերջին մեկ տարվա համարները նորից թերթելու, ամենահաճախ հանդիպած անունները հաշվելու և հրապարակելու ժամանակը: